յարմար կ'լինի այսպիսի երկրում. որ շարժը միշտ երէրում է թէ օրօրում դետինը։

Վերջացաւ և վանքի սենեկաց շինութիւնն, որով կը բաւականան թէ վանահայրն, թէ ուսուցիչներն և թէ ուխտաւոր հիւրերն, որոյ պակասութիւնն մնաց մէջի պարագայքը, աթոռ, սեղան, եւայլն զորս խոստացել են ուղարկել պ. Լալայեանց Բագուաբնակ իշխաններն՝ անցեալ տարի վախճանած Ստեփան Լալաեանցի մնացած կայքիցն[1]) և յուսով եմ, որ մեծապատիւ Լալաեանց իշխաններն չեն խնայել թողուլ վանքի մէջ իւրեանց յիշատակն, ինչպէս չ'խնայեց մեծապատիւ Կարապետ աղայն Լալայեանց նուիրել սենեկաց շինութեան համար 500 ռուբլին, ինչպէս վերը գրել եմ, իսկ 12 երկաթեայ մահճակալներ արդէն նուիրել են մեծապատիւ Բուդաղեան եղբարք։

Վերջացնելով Սաղիանի վանքին վերաբերեալ գրուածքս կը ցանկամ ազգայնոց ծանօթութեան համար գրել այս տեղ համառօտ՝ Բագուեցւոց իմ ժամանակին 1887 յունիս, 1894 թ. յունիս նուիրաբերութիւնքն թէ յանուն սրբոյ Էջմիածնի, և թէ Սաղիանի վանից և թէ ազգային այլ հաստատութեանց, որք են հետեւեալքն։

ՑՈՒՑԱԿ

Տեսակաց և որքանութեան նուիրաբերութեանց բարեպաշտ Բագուեցւոց յընթացս 1887—1894 ամաց՝ յաւուրս Առաջնորդութեան իմոյ։

Թիւ	ԱՆՈՒԱՆՔ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ	Մէջ թ.	Դիտող
1	Ցարդոյ Բուդաղեանց եղբարք նուիրեցին յապահովութիւն կառավարութեան վանական դպրոցին Սաղիանի վանից . .	10000	
	Որոյ տոկոսն հոգաբարձութիւնն ստանայ ամ ըստ ամէ .	600	
2	Նոյն յարգոյ եղբարք նուիրեցին յօգուտ շինութեան աղբերն նոյն վանից"	100	

[1]) 1892 թուին պ. Բալայ բէկն Լալայեանց ցուցակով ուղարկել էր տան մանրամասն պարագայք։